

ՅԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆՔ

ՈՐՈՑ ԵՆԹԱՐԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԲՈՅ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ
ԱՃՈՒՄ ԵՆ:

Մանուկն ծնելիս անհանդիստ աշխարհք
է տեսնում, անհանդիստ է նա ինքը և
անհանգստութիւն է բերում իւր հետ:
Խնչպէս քարը՝ որ ջրի մէջ ընկնում է
երկար տարածութեամբ նորան ծածանում
է, այսպէս և երեխան իւր աշխարհք դա-
լովիս առաջ է բերում հազար տեսակ շար-
ժողութիւններ և զանազան զօրութիւն-
ների՝ ներգործող ու ընդդիմադրող լինե-
լու՝ պատճառ է դառնում: Մանուկից
պէտք է կազմակի եթէ կարելի է ասել, մի
տիեզերական մարմին, որին սահմանուած
է որոշեալ ընթացք կատարել: Այդ ըն-
թացքի ուղղութիւնը պայմանաւորվում
է այն զօրութիւններով, որոնց ազգեցու-
թեանց ներքոյ երեխան աճում է:

Երեխայի կրթութեան և դաստիարա-
կութեան վերաբերեալ խնդիրները ձշու-
թեամբ հասկանալու համար՝ պէտք է քաջ
դ' տենալ և միշտ աչքի առաջ ունենալ
այդ զօրութիւնները: Դոցանից ամեն մե-
կը զիմում է զինովին կամ մասամբ իշ-
խել երեխայի վերայ և իւր բնութեան զը-
րօշմը տպաւորել նորա ուղղութեան վե-
րայ: Վյաբանօրէն ասելով՝ ամեն մեկը
ցանկութիւն ունի, որ երեխան հետեւ
նորան և ընդունէ նորանից և չափ և օրէնք
իւր զարգացման համար: Այդ զօրութիւն-
ների ազգեցութիւնը մասամբ կաշկանդում
են երեխային, մասամբ վերանորոգում են

նորան. մինը բանաւորում է նորա զարգա-
ցումը, միւսը արագացնում է: Մի և նոյն
ժամանակ այդ զօրութիւնները շատ ան-
գամ երես առ երես հանդիպելով, սկսում
են մաքառել. վասնզի երեխան ամենայն
ժամանակ կարող չէ բոլորին ել զուգըն-
թացօքէն ենթաղրուել՝ երբ նոքա մի-
մեանց հակառակ բնութիւն ունին: Խսկ
երբեմն ընդ հակառակն նոքա փոխադարձ
պահպանում են միմեանց, և ներգործում
են միօրինակ ու մի ուղղութեամբ: Իսյց
նոքա երբէք մանկան վերայ այնպէս ան-
ցանում չեն՝ որ նորա վերայ հետք չթող-
նեն:

Խսկ այդ ազգեցութիւնները, որոնք
երեխայի վերայ ներգործում են, նոյն խսկ
երեխայի մէջ մի այնպիսի բանի հանդի-
պում են, որ նորա բնութիւնն և եռութիւնն
է, այն կենսական սերմ, որից կազմվում
է նորա ֆիզիքական և հոգեկան զանդ-
ուածքը: Այդ սերմը իւր ներքին բովան-
դակութեամբ, երեխայի զարգանալիս՝ նոյն-
պէս մշտական ներգործող զօրութիւնն է
դառնում: Փորձը մինչեւ անդամ ցոյց է
տալիս, որ այդ սերմը պարզեած է, մի այն
պիսի անթառամ զօրութեամբ, որ վերջ
ի վերջոյ յազմում է այն արտաքին զօ-
րութիւններին, որոնք ձգտում էին ճնշել
երեխային: Այդ սերմը մեզ անյայտ նորա
ներքին բովանդակութեամբը և այն յա-
տուկ ձեւերովը, որ դա ընդունում է իւր
զարգանալու ժամանակ՝ զանազան ազգե-
ցութեանց յաճախմանց պատճառաւ: և
որ մի մասը նորից կորցնում է, խսկ միւս
մասը պահպանում է, — այդ սերմը երե-
խայի անհագուականութեան է կոչվում: Խւ-
րաքանչիւր դաստիարակը պէտք է հմուտ

լինի այդ անհատականութիւնը լուծելու։ Իսպաց առաջիկայ յօդուածում մենք այդ խնդրի մասին չենք խօսի, վասնզի մեր խօսելու նիւթն է վերլուծելն այն արտաքին զօրութիւնները ու ազդեցութիւնները, որոնց ներգործութեան ներքոյ զարգանում է անհատականութիւնը, և շօշափելի կերպով ցոյց տալն այդ ազդեցութիւնների ամբողջ նշանակութիւնը։

Այս իսկ ծնելիս՝ երեխային պատասում է նիւթական աշխարհը, նորան լրջադադար բնութիւնը, օղը, տաքութիւնը, լոյսը, կերակուրը խմորում են նոր ս Փիզիքական կեցութիւնը, ուրեմն և նորա հոգեկան զարգացումը, վասնզի այս վերջինը կախում ունի առաջնից։ Այժմէ երեխան բաւական քնատուր կենսականութիւն և ընդդիմադրող զօրութիւն ունի բնութեան խստութիւնների, պակասութիւնների, ախտերի չափազանցութեան հետ մաքառելու համար, ապանա պիտի աճէ և զարգանայ. բայց հազար և բիւր գեպքերում նա այդ առաջին պատերազմում իւր հոգին աւանդում է։ Ինութիւնը հազարներով յաղթում և կլանում է երեխաններին. ընկեցող աստղերի նման նոքա առ մի վայրկեան բորբոքվում և ապա հանգչում են։

Վոհասարակ շրջապատող բնութեան ազդեցութիւնը անդադար երեսում է մանկութեան ժամանակ, և աննշմարելի անցքերով մտնում է երեխայի ներքին կազմուածքի մէջ։ Ունեակը, տունը և գաւիթը մեռած չեն նորա համար. նոքա որոշում են նորա առաջին ունակութեանց և թելալրութիւնների (տեղեկութիւն) թէ բովանդակութիւնը, թէ ձեզ, թէ աեսակը և թէ շափը։ Մարդկային հոգւոյ հա-

մար մեծ և խորհրդաւոր նշանակութիւն ունէ, թէ մարդս ուր է անցուցանում իւր մանկութիւնը, արդեօք խոնաւ մարանում, թէ թարմ օղի՞ մէջ, զրաւեցուցիչ գիւղական տնակո՞ւմ, մշակի, արուեստաւորի արուեստանոցո՞ւմ, ուսումնականի սենեակո՞ւմ, թէ նաւապետի խրճթի՞ առաջ, ուր լավում են ալիքների անդադար դղբդմունքը։ Երեխային շրջապատող բոյսերը և կենդանիները ազդում են նորա թելադրութիւնների, զգացմունքների, ցանկութիւնների և պարապմունքների վերայ։ Վուաւել բազմօրինակ ներգործութիւն ունին շրջապատող դիրքի ազդեցութիւնները, նորա յատկանիշը բնաւորութիւնը. ամայի անապատը այլօրինակ է ազդում քան լեռները և անտառները. լեռները և անտառները այլօրինակ քան մարդաբնակ դաշտավայրերը. Խտալիան այլօրինակ՝ քան հիւսիսի սառցապատ վայրերը։ Ուհեւ շատ դժուար է համարեա անկարելի է առանձին առանձին անուաննել բնութեան բազմատեսակ բոլոր ազդեցութիւնները, որոնք առաջանում են նորա բազմատեսակ երեւոյթներով։ այսինքն հրային, օդային, ջրային ու երկրային, մեռեալ հանքային թագաւորութեան, կենդանի ծաղիկների և անասունների, կլիմայի երեսյթներով, որոնցով խմորվում է երեխայի Փիզիքական և հոգեկան զարգացումը, — բայց բոլոր այդ ազդեցութիւնները անտարակոյս կան և բոլորեքեանք կազմում են հաւաքական զօրութիւն, որը, եթէ կարողանայինք նորան առանձնացնել (ուրիշ զօրութիւններից), երեխայից կտտեղձեր միանդամայն առանձնատեսակ մարդ։

· · · · Վ. Յ. Ժ. միմիայն բնութիւնը չէ

ներգործում. այժմեան մանուկը աճում
է գերասապանչ մէջ. սորա մէջն է բովան-
դակվում այն երեսորդ զօրունիւնը, որ
հուաճում է երեխային և զիմում է իւր
աղքեցութեան ներքոյ ենթարկել նորան:

Եյս զօրութիւնը սկզբում երեւում է
առ զուակն ունեցած մօր սիրոյ մէջ, և
ապա առաջ է գալիս իրը մի հիւսուածք
այնպիսի զօրութիւնների, որոնք միշտ և
անդադար ներգործում են ընտանեաց
կեանքի, հոգու և պատմութեան մէջ:

Մայրը առաջինը պաշտպանում է երե-
խային բնութիւնից, որը առանց մօրը
կսպանէր նորան: Իւր կա՛ռով և ջերմու-
թեամբը նա նորա մէջ կեանք է պահպա-
նում. իւր խօսքերով և հայեացքներով,
հոգացողութեամբ և քնքշութեամբ նա
ցանում է մանկական հոգւոյ մէջ դրդմանց
և զգացմանց առաջին սերմերը: Կորա
անբաժան իշխանութիւնը մինչև այն ժա-
մանակ շարունակվում է, որ երեխան կա-
րողութիւն ստանայ անդամները անկախ
շարժել, և գործ ածել՝ իւր ներքին զար-
գացող կեանքի պահանջողութիւնները
լցուցանելու համար: Քանի երեխայի վե-
րայ սաստիկ իշխում են արտաքին աշխար-
հի կամ բնութեան աղքեցութիւնները,
այնքան առաւել երեւում է և մօր, հօր,
աղջականների, տանեցիներու աղքեցու-
թիւնները, բնութեան աղքեցութիւնները
և գերդաստանի աղքեցութիւնները
սկսում են մաքառել: Բայց այդ մաքառ-
ման նշանակութիւնը շատ սակաւ է՝ հա-
մեմատելով գերդաստանի ներքին կենաց
աղքեցութեան հետ:

Ընտանեկան կեանքի մէջ շատ զօրացած
դատանվում են այն ամենայն ներհակու-

թիւնները, որոնց միայն ընդունակ է մարդ-
կային էակի զարգացումը: Կորա երեխայի
վերայ այնքան առաւել ներգործում են,
որքան նա երկար ժամանակ անընդհատ
մնում է, նոցա աղքեցութեանց ներքոյ:
Գերդաստանը լինում է աղքատ կամ հա-
րուստ: Կորա գաղափարների շրջանը լի-
նում է մեծ կամ սուղ, լեզուն աղքատ,
անխմաստ, կոպիտ և անձոռնի, կամ թէ
կանոնաւոր, ճոխ և աղնիւ: Ընտանեաց
անդամները իւրեանց փոխադարձ յարակ-
ցութեանց կամ ուրիշների հետ յարակ-
ցութեանց ժամանակ բարեսիրտ, քաղա-
քակիրթ, ընտել և սկասուող են, կամ թէ
կոպիտ, կոռաւասէր, կամակոր, վերաւո-
րող են: Կորա կանոնաւոր, խաղաղ կեանք
են վարում, փոխադարձարար միմեանց
օգնում են, կամ թէ կենում են անմար-
դավայել, անկանոն, ձանձրացնում են
միմեանց: Գերդաստանի ներքին կազմ-
ուածքի համաձայն, նորա արտաքին պատ-
կերը ևս կամ ափշեցնում է իւր կեզտով,
ածած մածած տան կամ կարասիքով,
անկարգ անվարք տեսքով, կամ թէ դրա-
ւում է իւր մաքրութեամբ, խաղաղու-
թեամբ, կարգ ու կանոնով: Ընտանեաց
անդամների վատ, աղաւաղած բնաւորու-
թիւնը ծնում է անհաւատարմութիւն,
կեղծաւորութիւն, նենդութիւն, խարէ-
ութիւն, անամօթութիւն, անտղնուու-
թիւն. Խակ բարոյական գերդաստանում
երեւում են ծշմարտութիւն, արդարու-
թիւն, աղնուութեան և պարտականու-
թիւնների Ճիշդ կատարման սկզբունք-
ները: Պարապմունքներից աղատ ժամե-
րը, հանգստութեան ժամերը, նուիր-
վում են կամ րիբա և սաորին զուարծու-

թիւններին, կամ անցուցանվում են անմեղ զբօսանքներով, օգտաւէտ խօսակցութեամբ, գեղարուեստական գործերի և բնութեան պատկերների զմայլելով։ Զգացմունքը, երեակայութիւն, բանականութիւնը և լեզուն կամ երեելի աշխարհի նեղ սահմաններում են շրջում, երբեմն միայն սովորութեամբ և ոչ ծանրախորհուրդ մատածութեամբ այդ սահմաններից դուրս ցատկելով զեպի աներեւոյթ աշխարհի շրջանը, ուր միայն խաւար սնապաշտութիւն է նոցա միսում, — կամ թէ հաւատի մեղմ ձաճանչը, որ աստուածային սիրոյն, ամենակարողութեանն և իմաստութեան ապաւինում է, լուսաւորում և ջերմացնում է Ակրակի և լուր օրերը։ Կարձ ասել, անկարելի է անդամ մօտաւորապէս մաանանիշ անել զերդաստանական կեանքի անթիւներհակութիւնները, որոնք այդպէս տեսակ տեսակ ձեւերով զոյանում են քաղաքների և զիւղերի մջ, զանազան առողջանների և դասակարգերի մէջ։

Այդ ներհակութիւններից խմօրվում են այն տպաւութիւնները, որ գերդաստաններում երեխանները ստանում են։ Դոքա են ծնում սէր կամ բրտութիւն, բանականութիւն կամ անբանութիւն, զոցա ազգեցութեամբը ոյս կամ այն բանը գովասանվում ու պարսաւվում է, հրամայփում և արգելվում է, զոցա ազգեցութեամբը մի բանից զսպում՝ առ միւս բանը գրգռում են, այս կամ այն բանը, այսպէս կամ այնպէս, ցոյց են տալիս կամ թաքնում են։ Դոցա ազգեցութեամբը այս ազգեցութեամբը անհատականութեան հիմքում զրվում է՝ զգացմանց և մատածութեան, հայեացք-

ների և զատողութիւնների բոլոր նուրբ յասակութիւնները արտայայտելու և ունակութեանց սովորութիւնների, կիրքերի, ցանկութիւնների, երկիւղների և յոյսերի, տեսողութեան, լսողութեան, շօշափութեան, առ բնութեան երեսյթները զիտողականութեան մարդկային գործքերի և արարմունքների զնահատութեան, համակրութեանց և հակակրութեանց, բանականութեան և երեակայութեան, պարապմունքների ընտրութեան, և այլն ուրիշ բանների չափը, — զրվում է աւելի և աւելի խոր մինչև որ աճող մանուկից դուրս գայ մի մարդ յայնի և որոշեալ յատկութիւններով։ Պէտք է միայն յետ նայենք և մի հայեացք ձգե ք մեր մանկութեան ժամանակին, և վերլուծենք այն բազմաթիւ տպաւորութիւնները, որ այն ժամանակ ստացել ենք զերդաստանի մջ, ուր թագաւորում էին մերթ ներդաշնակութիւն, մերթ անհամաձայնութիւն, և կհասկանանք, թէ որքան մեծ է այդ տպաւորութիւնների զօրութիւնը, թէ ինչ յաջողութեամբ դոքա երեխայի հողին ենթարկումն իւրեանց իշխանութեան, թէ ինչ արմաններ են թողնում նորսա մջ։

Ուսափ զարմանալի չէ, որ երիտասարդների կրթութեան և զասափարակութեան խնդրի մջ, միշտ առաջին տեղն է բռնում զերդաստանը, նորա ներքին բովանդակութիւնը և արտաքին զրութիւնը, իրրե մի զօրութիւն, որից էապէս կախում ունի երեխայի տպագան։

Ժամանակը հասնելուն պէս, սովորաբար 7 և 8 տարեկան հասակին մջ, երեխան դպրոց է մտնում։ Նոր զօրութիւն իւր ձեռքերը պարզում է երեխայի վերայ, մի

զօրութիւն՝ որ աղդու միջոցներով է զի՞նաւորած նորա էութիւնը իւր իշխանութեան ներքոյ ենթարկելու:

Դպրոցը երեխային ընդունում է նախապէս պատրաստի դիտաւորութեամբ աղջել նորա վերայ ոչ թէ պատահմամբ և ընդհամունքներով, այլ կանոնաւոր և անընդհատ ուղղութեամբ, դիտաւորութեամբ՝ անում ենք, որ գերդաստանը համարեան երբէք չունի: Դպրոցը վրատահութիւն և կարողութիւն է յայտնում քայլ առ քայլ հարստացնել, ընդլայնացնել, կանոնաւոր ընթացք տալ երեխայի դադախարների շրջանին, և յուսով է այս ճանապարհով նորա հոգեկան կեանքի մեծ մասը յաջողութեամբ ենթարկեցնել իւր ձգտողութիւններին և նպատակներին:

Այն ինչ գերդաստանը կարծես առաւելապէս ներգործում է երեխայի զգացմունքների և ձգտողութիւնների, բարքի, կամքի, հակմունքների, սովորութիւնների, համակրութիւնների, փափազների և կրքերի վերայ, իսկ բնութիւնը բարդում և լուծում է, ըմբռնութները և թելազրութիւնները, — դպրոցը դատնում է առաջին զիտակարար կազմուած և մոտաւոր զօրութիւն, որ զիմում է դիսաւորապէս ներգործել հասկացողութիւնները, դատողութիւնները և եզրակացութիւնները կրթելու, ուրեմն հանձարը և բանականութիւնը կրթելու, որպէս զի նոցա միջնորդութեամբ իւրեան ենթարկեցնէ, հոգու միւս շարժողութիւնքը: Ոչ մի զօրութիւնը այնպէս յաղթակրութեամբ չէ նայում երեխայի վերայ, ինչպէս դպրոցը, և ոչ մինի վերայ երեխան այնպէս երկիւզաղի և աղեր-

սալի հայեացք չէ արձակում, ինչպէս նորա վերայ: Ասում են, դպրոցին է պատկանում երիտասարդութիւնը, իսկ սորահետ և ապագան: Պանծալի միաւը: Այժմ տեսնենք, թէ ինչ են այդ զօրութեան յատուկ նշանները, դորա միջոցները և միջոցների գործադրութեան եղանակը:

Եամի և առաջ մենք տեսնում ենք՝ որ պէսուի պէսուի դուրսցնեք կան: Ըատ մեծ զանազանութիւն, շատ տարբեր հետեանքներ առաջ կգան, նայելով թէ երեխան սկզբնական ուսումնարանից ուր կրտնէ: Փիլորդիկան դիմնագիոն, թէ բէալական դպրոց, իսկ այս ուսումնարաններից ուղղակի կեանք, կամ դարձեալ որ և իցէ մի այլ բարձրուսումնարան: Այն շրջանները, ուր մանուկի ուզեղը պատեցնում են այդ ընդհանուրակրթող ուսումնարաններում, մասամբ խմբրվում են ուսանելի նիւթոց բնութեամբը, ընդարձակութեամբը և սոցաներքին ներհակութեամբը, մասամբ ևս մանուկներին այդ նիւթերի հաղորդելու ոճովը: Երկու գէպքերում ևս նոքաշատ զանազան են, և աշակերտի ուզեղի ընթացքում, որ պէտք է նա ընդունի, և որ իրօք շատ կամ քիչ արագութեամբ նոցա աղջեցութիւնից նա ընդունում է, շշափելի կերպով երեսում է նոյնպիսի զանազանութիւն, որպէս զանազանութիւն կայ հին ծերացած, և նոր ժամանակակից աշխարհների մէջ: Այդ երկու դպրոցների պատմութիւնը, այսինքն ֆիլորդիկան հին ուղղութեամբ՝ բէալական ժամանակակից ուղղութեամբ դպրոցների պատմութիւնը, ինչպէս յայտնի է, երկարժամանակ ներկայացնում էր, և մինչեւ այսօր ևս ներկայացնում է, մի պատերազմ

մանուկ սերնդին տիրապետելու համար։ Բայց եթէ մի քանի պարզների ասած միաբը ուղեղ լինի, իրեւ թէ՝ երկու ուսումնարաններում ևս երեխաները հաւասարապես կատարեալ ընդհանրական կրթութիւն են ստանում, այնու ամենայնիւ տարսակոյ չկայ, որ զուա ֆիզիոգիկան կրթութիւն սուսացած մարդը շատ զանազանվումէ ժամանակակից հոգւով կրթութիւն ստացած մարդից։

Այս իրողութիւնից անկախ՝ փոյթ չէ, թէ ո՞ւ դպրոցումն է մաել երեխան, կամ թէ որ ուղղութեանն է ենթարկուած նորա ուղեղը, նորա վերայ գրաշմիում է մի ուրիշ, միանդամայն նոքնակախ ազդեցութիւնը, — այն է բոլոր հերիայ հարժառութեաց նմէ ազդեցութիւնը։ Աւսումնարանի բոլոր վարժապետները թող չափազանց անկեղծ սիրով կապուած լինին իւրեանց գործի հետ, այնու ամենայնիւ երեխան կենթարկուի նոցա զանազան բնաւորութեանց ազդեցութեանը, և այս ազդեցութիւնը նորա վերայ կամ օգտաւէտ կամ վնասակար է լինում։ Աչ մի ուսուցիչը այնպէս չէ ազդում, ինչպէս միւսները, ոչ մի աշակերար նոյն և հաւասար յարարերութիւն չունի բոլոր ուսուցիչների հետ։ Աշուկերտի և ուսուցիչների մեջ զոյմնում են հազար տեսակ սիրոյ և առելութեան ձգական և առաձգական զօրութիւններ, որոնք առանց խորութեան ազդում են աշակերտի ունեցած թելազրութիւնների և դատողութիւնների, զգացմունքների և կըքերի շրջանի վերայ, ուրեմն նորա բորբը կրթելու վերայ։

Այսպիսի ազդեցութիւնները թեթեան չեն, և անուշաղիր չեկաք է թողնել։

Ենկարելի է յուսալ, իրեւ թէ մանուկի համարնշանակութիւն չունի վարժապետների յատուկ անձնաւորութիւնը, իրեւ թէ թող լինին նոքա առողջ, աղնիւ, հաստատակամ, իւրեանց անձը յարգեցուցանող, երիտասարդական հոգին հակացող և ջերմ սրտով սիրող, կամ թէ չեղոք, բիրտ, վատ համարում ունեցող, թոյլ, կասկածամիտ, ստուասիրտ, — փոյթ չէ բայց մանուկը կմունայ նոցա ազդեցութիւնը, կթափ տայ եւրեանից իւր դպրոցական կեանքը, որ այդ աշգեցութիւնիցն եր խմորած, և առաջ կընթանայ իւր ընտական ճանապարհով։ Այսպիսի յոյսերին ընդգեմ է փորձը։ *Աերքին և արտաքին կեանքը, որ աշակերտը դպրոցում և արտաքց դպրոցի վարում է իւր վարժապետների անձնաւորութեանց ազդեցութեամբը, դեռ ելի երկար ժամանակ ճնշում է նորան՝ դպրոցական ժամանակի սահմաններից գուրս։ Ծառ քիչ կդանուին այնպիսի մարդիկ, որոնք անկեղծ և մանրամասն քննելով իւրեանց զարգացման ընթացքը՝ կխօսառվանեն, թէ զարգացման մեծ մասը, լաւ կամ վատ մոքով, իւր վարժապետների անձնաւորութեանց արդիւնքն է։ Կարելի է նաև ասել՝ թէ որովհետեւ ուսուցչի ուսուցանելու յաջողակութիւնը կախեալ է զլաւուորապէսնորա անձնաւորութիւնից, — այս ուրեմն ուսուցչի ազդեցութիւնը մանկութեան հասակում զերազանց է մինչեւ անդամ զերդաստանի ազդեցութիւնից։ Աւսուի բոլոր խելացի ծնողները շատ մտածումեն, թէ երեխան դպրոցը որ մանէ՝ արգեօք որպիսի անձանց շրջան պիտի գանէ։ Վենք զբականապէս չենք համաձայն այն կարծի-

քի հետ, որ այժմ շատ կուսակիցներ է գտնում, իբրև թէ մի և նոյն է, երբ ուսուցիչը լաւ կամ վատ մարդ է, գէթ միայն լաւ ուսուցիչ լինի նա: Այս կարծիքը նշանակութիւն ունի միայն հասակն առաջ աշակերտի վերաբերութեամբ, այն պատճառով, որ նորա և ուսուցչի մէջ այլ յարաբերութիւն չկայ, բաց ի գիտութիւններ հաղորդելուց: Բայց և նորա համար այս կարծիքը վտանգաւոր է և մեծ մասամբ սխալ:

Եյն ազդեցութեանց շրջանին, որոնց երեխան դպրոցում ենթարկվում է, պէտք է դասել նաև նոյն ընկերականների աշխարհը: Եշակերանների խօսակցութեանց բովանդակութիւնը, նոյցա միաք արտայայտելու առանձնատեսակ, երբեմն կոպիտ եղանակը, դասակիցների յարաբերութիւնը միմեանց հետ, բարձր և ստորին դասատունների հետ, կարծիքները և դատողութիւնները ուսուցիչների ու աւագների մասին, հայեացքը դպրոցական կանոնների մասին և զէպ ի նոյտ պատուերներին յարաբերութիւնքը, նաևսկին դպրոցական սերնդից անցած աւանդութիւնները, դործունելութիւնը, ջանաղը թիւնը և կենդանի ձըդտումը առ զարգացումն, կամ թէ ծուլութիւնը, անտարբերութիւնը և մէքենական շարժումը զէպի առաջ, այս բոլորը և ուրիշ շատ բաները կազմում են դասատան ու ընդհանուր դպրոցական ոգի և մթնոլորտ: Այս ողու մէջ, շատ կամ քիչ, միավում է ամենայն աշակերտը: Այս մըթնոլորտում գուցէ հասունանում են խորիմաստ և աղնիւ մոքեր, բարեբարութիւն և վայելչութիւն, հնազանդութիւն, սէր, ընկերակցութիւն, բարեկամութիւն,

պտղատու դիտաւորութիւններ և աղնիւ ոգեորութիւն: Բայց նորա մէջ կարող են երեխիլ նա և կոպիտ կըքեր, վայրենի կատաղութիւն, անխոչիմ չարութիւններ, խորամանկութիւն և խարդախութիւն, ստութիւն, յանդզնութիւն և գիտակցական ընդդիմագրութիւն օրինացի կանոններին: Այս ընդհանրական ոգու ազդեցութիւնը աշակերտների վերայ շատ սաստիկ և հաստատահիմն է, ոչ մի աշակերտի համար երաշխաւոր չէ կարելի լինել, թէ այդ ազդեցութիւնը նորա փափուկ մանկական ուղեղում մինչ ի մահ անջնջելի դիւտեր չէ թողնի:

Այս ազդեցութիւնը առաւելանում կամ ընդդիմագրվում և թուլանում է աշակերաց փոքր փոքր ընկերութիւնների բաժանուելով՝ և իւրաքանչիւր ընկերութիւնիւր առանձնատեսակի բնաւ որութիւն ունենալովը, — այս բաժանումը մի այնպիսի իրողութիւն է, որ ամենայն դպրոցի ետական յատկութիւն է: Շատ անդամ այսպիսի մերձաւորութիւնը ընկերութիւններով փրկարար զեղթափ են դպրոցական ընդհանուր ոգու վատ ազգեցութեան ընդգէմ. բայց և յաճախ չէնց դոքա ամենաողբարի մոլորութեանց ազքիւր են զառնում: Իսկ եթէ մի կողմից քանի մի աշակերտներ կարող են ամբողջ դասատուն վարակել, ընդհակառակ միւս կողմից կարող են վարակած դասատան մէջ եզր սիրութեան և փոխադարձ համակրութեան ազդեցութեամբ ամուր կապուել, փոխադարձ կազմուրել, միմեանց պահպանել և հուսկ ուրեմն ընդդիմանալ ընդհանուր հոսանքին, գոնեա դժուար զէպքերում: Ճինց իսկ այսպիսի զէպքերում դպրոցա-

կան կեանքը գեղեցիկ տպաւորվում է, և այդ ժամանակ կապած ընկերութիւնը դարձ տարիները միշտ լուսաւորում է իւր կենդանացուցիչ ճառագայթներով։

Մենք մանրամասն չենք քննի զպրոցի միւս ազգեցութիւնները երեխայի վերայ։ Ժամանակի կանոնաւոր որոշմունքը, շատ տարիներում մի և նոյն պարապմունքների միակերպ փոփոխութիւնքը և նոցա հետ կապուած սովորութիւնը, զպրոցական տօնները, պատիժները և պարզեները, նըշանները, հարցաքննութիւնները և փոխազբութիւնները, բնակարանը, զպրոցի ժառանիքը, — այս բոլորը զպրոցական ազգեցութեան ընդարձակ շրջանի մէջ տեղ ունի։ Այս բոլորի հետ միւս ազգեցութիւններն ես միատեղ առնելով, ոյսինքն ընդհանրապէս ուսուցանելին և մասնաւորապէս առանձին առանձին նիւթոցուսուցանելին, ուսուցանելու ոճն, ուսուցանելու բաժանդակութիւնն՝ որով զպրոցի ուղղութիւնը որոշվում է, ուսուցիչների անձնաւորութիւնն, առանձին դասառունների ու բովանդակ ուսումնարանի ընդհանուր ողին, և աշակերտաց միմեանց հետ մերձաւորութիւնն, — մենք կտեսնենք, որ զպրոցը երեխային ամենայն կողմից պատառում է ամենահզօր ազգեցութիւնների հիւսուածքով։

Խսկոյն ծնելուց յետոյ, երեխայի վերայ իւր իրաւունքներ է յայտնում մի ուրիշ չորրորդ զօրութիւնը, և յայտնում է բաւական բարձրաձայն։

Այդ զօրութիւնը՝ ելեղէցին է, որ մկրտութեան միջնորդութեամբ իւր ձեռքն է առնում երեխային, և այն եկեղեցական խորհրդով նորա վերայ աներեսիթ աշ-

խարհի զրոշմն է դնում։ Ոսրանով նա ցոյց է տալիս, որ երեխան աղեաք է նորան պատկանի, իսկ նորա միջնորդութեամբ՝ իրերաց բարձր կարգին։ Եկեղեցին իւր ձեռքը մարդու վերայ պարզում է նորա աշխարհ դալու և մինչեւ աշխարհքից հեռանալու ժամանակ :

Եյս տեղ հարկաւորութիւն չկայ քըննել եկեղեցու յարաբերութիւնը գերդաստանի և գպրոցի հետ, մենք միայն ընդհանուր նկարագրութեամբ ցոյց կտանք, թէ իրապէս այդ զօրութիւնը ինչի մէջ և ինչպէս է երեւում յարտաքաւ։ Կա դիմաւորապէս երեւում է իւր երկու պահանջողութիւններով, որք միմեանց հետ սերտ կապուած են։ Որովհետեւ եկեղեցու ներկայացուցիչը հոգեորականաց դասն է Կա նոցա այն տեղ է որոնում, ուր միայն կարող են նոքա դանուել զերդաստանում և գպրոցում։ Կա կամենում է իւր ոգուվ թափանցել զերդաստանի և գպրոցի կեանքի մէջ, որպէս զի հաստատ պահանջն իւր իշխանութիւնը աճող սերնդի վերայ։ Եկեղեցու միւս բոլոր ջանքերը երեխային վերայ իշխելու՝ մեր յօդուածի նիւթ չեն և թոյլ են համեմատելով այն գործունեութեան և պահանջողութիւնների հետ, որ նա երեցնում է յիշեալ երկու շրջանների մէջ, այն է գերդաստանի և գպրոցի մէջ։

Եկեղեցին գերդաստանից պահանջում է, որ երեխային Վրիստանէկան հոգւով կրթէ։ Ուսումնարանից նա պահանջում է որ երեխայի դիմաներում տպաւորէ իւր առանձնայատուկ վարդապետութիւնը՝ և ապա նոյնը տարածէ մնացած ուսման վերայ եւ:

Եկեղեցին գերդաստանում պատրաստի է համարում իւր պահանջած հաւատքը, և այդ հաւատքին համաձայն—կենցաղավարութիւն, կամ թէ աշխատում է մըտցնել ինչպէս մինը՝ նոյնպէս միւսը։ Երեխան մասնակից պէտք է լինի այդ կենցաղավարութեան մէջ, որը իրու հիմք պէտք է լինի ծնօղաց որդւոց հետ վարմունքի մէջ։ Եկեղեցին դորանից մեծ յոյսեր ունի. մանկական հասակից երեխայի ընտելանութ այդպիսի կեանքին և ձևերին՝ նա հաստատ հիմք է տեսնում ապագայի համար, հիմք ասում ենք, որի վերայ երեխան աճում է, ժամանակով եկեղեցու լնինակախ անդամ՝ դառնալու համար։ Եյսունա զիմում է դպրոցում ևս պահպանել իւրներգործութիւնը, առաւելացնել դպրոցում հաղորդած ուսման տպաւորութիւնը, հաստատութիւնը և պաղատւութիւնը։ Եռհասարակ եկեղեցին դպրոցից միայն պահպանում է, որ կրօնադիտութիւնը ուրիշ ուսման նիւթերի հետ հաւասար ուսուցանուի, և որ նորանով կարգաւորուի և որոշուի միւս նիւթերի բովանդակութիւնը, ընդարձակութիւնը և ուսուցանելու եղանակը, — որով նա, ի հարկէ, յայնում է այն իրողութիւն՝ թէ իրաւունք ունի իւր քննութեան տակ ձգել դպրոցական կառավարութիւնը և մասնակից լինել նորա մէջ։ Եյսպէս ուրիմն եկեղեցին դպրոցում երեխայի վերայ այնքան չէ ներգործում զգացմանց և կամքի կողմանէ, ընաւորութեան և ներգործելու եղանակի կրթութեան կողմանէ, որքան յէլլուննեան և նէլլուրուննեան կողմանէ։ Բայց որովհետեւ առանց թելադրութեան

և յիշողութեան անկարելի են զգացմունք, կամք և վարք, ուստի ինքն ըստ ինքեան հետեւում է, որ եկեղեցին՝ երիտասարդների յիշողութեան մէջ տպաւորելով իւր վարդապետութիւնը, յոյս ունի այնու աղդել և այդ երիտասարդների ապագայներքին և արտաքին կեանքի վերայ :

Վեծ նշանակութիւն ունի նաև այս յարաբերութեան միւս մասը, այսինքն տարրերութիւնները, որ կան զանազան դաւանութեանց և որ շատ անգամ մի և նոյն դաւանութեան մէջ կայ։ Այդ տարրերութիւններից կախեալէ մի էական խնդիր, այսինքն խնդիր այն աղդեցութեան վեհ մասին, որ եկեղեցին պահպանումէ դպրոցում ունենալ և այդ աղդեցութիւնը երեան կացուցանելու եղանակն մասին։ Եկեղեցւոյ աղդեցութեան նշանակութիւնը և այդ աղդեցութեան հետ կապուած յոյսերի որպիսութիւնը՝ բղիսումէ յետագայ հանդամանքներից։ Նախ եկեղեցին ինչ և որպէս է կամենում, որ դպրոցում ուսուցանուի. երկրորդ՝ որպիսի առջև նըշանակում նա ուսուցանելու միւս, ոչ աստուածաբանական նիւթերին։ և երրորդ՝ դոցաբացարելու ո՛վ եղանակն է թոյլ տալիս։ Խակ այս աղդեցութիւնիցը պարզ որոշում են այն յոյսերը՝ որ կարող են ունենալ իւր դրութեան աստիճանին նայելով, թէ դպրոցը իւր զործունեութեան շրջանը պահպանելու կամ թուլացնելու նկատմամբ, :

Անց որ երեխան ծնօղաց շէմքից զուրս է գնում, նա մննում է նոր աղդեցութիւնների շրջանում, ուր նա տղայական և երիտասարդական հասակն է առնում, և մինչի մաշ պահպանում է իւր մէջ այդ աղ-

գեցութիւնների հետքէրը : Այդ շրջանն է աշխարհը կամ կեսնքը և շրջապատղուների հետ հաղորդակցութիւնը, հրապարակների և շուկաների մէջ, պանդոկների և թատրոնների մէջ շարժողութիւնը, միուլ բանիւ՝ այն բոլորը, ինչոր մարդկայն ներքին կեանքից ձգտումէ ելանել և միւս մարդկանց ձգտմանց հետ խառնուելի մի ընդհանուր ամբողջ : Դժուար թէ գտնուի զոնէ, մի գերդաստան, որ միանգամյն առանձնակի և անհաղորդ լինի : Դիւզական տնակիներում ցիրուցան եղած գերդաստունները աշխատումէն դրացիներու հետ մերձենալ, և ապա մերձակայ քաղաքի հետ հաղորդակցել : Կոքա իւրեանց կեանքը ընդհանուր մարդկային կեանքի հետ են խառնում, որը միւնոյն ժամանակ ցոլանումէ նոցա մէջ և նոցա միջնորդութեամբ :

Երջաղացառ աշխարհի հետ հաղորդակցունենալ երեխայի հոգու մէջ բազմացնումէ մարդկոյին կերպարանքների թիւը, և այս պատճառաւ նորա մէջ նոր համակրութիւններ և հակակրութիւններ են ծընում : Մարդկանց մէջ խառնուելով զարդանումնեն նոր գաղափարներ, զիաղողութիւններ և զատղութիւններ, և հասակաւորների բարքը լաւ կամ վատ կողմանէ տալաւորվումէ մանուկ սերնդի մէջ : Ուրախութիւնները, զբոսանքները, տօները, հանդէսները, երբ երեխաները առիթ ունին միմեանց հանդիպելու կամ երբ հասակաւորների հետ խօսումնեն, լուսմեն, տեսնումնեն և ներգործումնեն, — հոգու նոր նոր ձեւ տալու աղբիւներ են, որ կամ զարձեալ անհետանումէ, կամ ապագայ հետեանքների սերմ է դառնում : Այդ

աղջեցութիւնների ներգործութիւնը մանաւանդ սաստկանում է, երբ իւրաքանչիւր գերդաստանը աշխատումէ պահպանելիւր յատուկ անհատական բնութիւնը : Խշանի գերդաստանի հոգին այն չէ, ինչ որ հասարակ քաղաքացու գերդաստանին է, վաճառականների մէջ այլ հոգի, այլ բարք է թագաւորում, քան արուեստաւորներու և գիւղացիներու մէջ, քաղաքական պաշտօնականներու և ուսումնականներու մէջ : Ուստի այն երեխան, որ իշխանի գերդաստանի մէջն է մեծացել, այնպէս չէ, ինչպէս այն երեխան, որ շինականի գերդաստանի մէջն է մեծացել . վաճառականի որդին այն չէ, ինչ որ ուսումնականի որդին է : Մենք չենք կամենում առել, իրբեք թէ այս կամ այն երեխան անպիտան է, բայց թէ մեկը չունի միւսին յատուկ նշանները :

Երեխան երբ առաջին անդամ դպրոցն է մանում, և քանի գեռ գերդաստանի մէջն է, սկսում է մի նոր հաղորդակցութիւն ունենալ հասարակաց կեանքի հետ, փողոցի բարքերի և արկածների հետ : Այս կողմանէ հասարակաց կեանքը մանաւանդ զօրեղ ներգործութիւնն է ունենում՝ բազմարդ և վաճառաշահ՝ քաղաքներում : Տնից մինչէ դպրոց ճանապարհը ոչ թէ մի ծածկած պատշգամի է, այլ փողոց : Երեխան փողոցն անց է կենում աղաղակների կամ լսութեան ժամանակ, աշխատող ու զգաստ մարդկան կամ հարբած ու զբունող մարդկան կշից, և կամ կրտպակների ու խանութների կշից : Ինչ ասես՝ որ նա այստեղ չէ տեսնում և չէ լսում ամենայն օր և բաւական երկար ժամանակ : Որպիսի զայթակղեցուցիչ և դրաւեցու-

ցիչ բաներ են նորան հանդիպում, ո՞ր ցանկութիւնների ու զուարձութիւնների, երեակայութիւնների, յիշելութիւնների, յափշտակութիւնների և մտածութիւնների կըքեր են յօւզվում նորա մէջ: Երեխան քանի հասակ է առնում, այնքան առաւել և առաւել խոր թափանցում է այդ կեանքի մթնոլորտում, եթէ գերդաստանը և գորոցը չեն պաշտպանում, չեն չափանորում, և չեն կանոնաւորում այդ կըքերը. իսկ երիասարդի առաջ նա բաց է անում բացարձակապէս կամ զազտնապէս համարեա թէ իւր բոլոր դռները, որոնք տանում են կամ մոլորութեան ճանապարհը, կամ առողջ երանաւոր կեանքի ճանապարհը: Փթած կամ մննդարար տարրերը, որ երիտասարդը այդ ժամանակ ներշնչում է և իւր ուղեղում տպաւորում է, առանց ներզործութեան չեն մնում նորա բարոյական զգացողութեանց և մտածութեանց, նորա դատողութեան և ձգտմանց զարդարման վերայ. իսկ սորանից, գոնեա մասամբ, կախեալ է տպագայ մարդու խմորուելը:

Ծ ըջապատզների հետ սյսպիսի յարակցութիւններից, որ աճող մանուկի համար առաւել և առաւել պարզվում են, գարձեալ մի նոր պարագնեն է ծնվում գերդաստանական կեանքի մէջ: Երեխան ըսկըզբում զուարձութեան համար միայն հետեւով հասակաւորների պարապմունքներին, վերջերում սակաւ առ սակաւ՝ իւր յատուկ ընդունակութիւնների և ուղղութեան համաձայն՝ պարզ երեւան է կայուցանում իւր ապագայ կեանքի պատկերը: Ըստագար ծնվումն այսպիսի խնդիրներ՝ ինչպէս իւր գաղտնական պատկերն է պատկերը:

Այս կերպութիւն մարդկանց մջան է անչ գործութեաններին ուղղ կընդուրեն, ինչ պէտք է ուղղանեց դուրս գայ:

Ոսկորաբար հասարակական և նիւթական գրութիւնը միւս դրդումներին յաղթում են և ստիպում են այս կամ այն ընտրողութիւն առնել: Մինչև անգամ երբ հարստութիւնը մի պայծառ ապագայ է խոստանում, մինչև անգամ այն ժամանակ ևս երկրային դործոց անհատապութիւնը՝ որ միշտ ստացուածքի կորուստ է սպառնում՝ վաղ սովորեցնում է կեանքում նախազգոյշ և հաշուատես լինելը:

Յայնի է, որ հազարաւոր երեխանները իրեւ դործունեութիւն անզիտակցարար ընտրում են իւրեանց ծնողների և ազգականների պարապմունքները, արուեստները և ճարտարութիւնները: Միւսները իւրեանց խորհուրդները հանգստայնում են այն աստիճանի վերայ՝ որը որ կենաց միջոցներ ձեռք բերելու առաւել օգտաւելու ու հեշտ եղանակ է, և ընտրում են այն եղանակը՝ որը որ օգտաւեազոյն է թւռում ապագայում: Իւրեանց այդ հաշվեներում զլաւուրապէս աչքի առաջ ունին ակրութեան հաստատութիւնները և նոցա մրջի պաշտօնական տեղերը, կամ թէ անտեսական գործունեութեան շատ յայտնի և զրաւեցուցիչ շրջանները, զրորին. մշակութեան և վաճառականութեան ծաղկացած ձիւղերը: Այսպիսի ընտրողութեան հետեւանքը այն է, որ սյս կամ այն պարապմունքին նուիրող երիտասարդների կազմուածքի մէջ սկսվում է ներքին պատերազմ, անգագար երերմունք և տատանմունք: Ըստ անգամ պարապմունքի ընտրութիւնը ոչ թէ նորանով է որոշվում՝

որ ընտրողի նիւթական դրութիւնը խնամատարուի, այլ որոշվումէ ազգատոհմական աւանդութիւնների և պատուասիրութեան ազդեցութիւնից։ Եյսպիսի դրաւեցուցիչ զրդումներից կամ ապրուատի պահանջողութիւններից բռնաբարած ընտրողութիւնը համորեա երբէք չէ բերում այնպիսի հետեւանքներ, որ ընտրողի բնական ձիբքերին միանդամայն համաձայն լինի, բայց առաւել քիչ է պատահում և այնպէս որ գործունեութեան ընտրութիւնը բղինէ, ոչ թէ որ և իցէ օտար շարժառիթներից, բայց միայն ընտրողի խորին համազանքներից և զիտակցած ընդունակութիւններից։

Եյս իրողութիւնները և յարաբերութիւնները աչքի առաջեն ունենալով, տարակոյս չկայ՝ որ այն ազդեցութիւնների մջ, որոնցից կախաւած է երիտասարդների կրթութիւնը, մեծ նշանակութիւն ունի գործունեութեան ընտրութիւն որոշող ազդեցութիւնը։

Այս մի կողմից գերգաստանը աշխատումէ ենթարկել երեխային իւր յատուկ կեանքին, սիրել տալ նորան իւր մաքերը և զգայութիւնները, մասնակից առնել իւր ուրախութիւններին և վշտերին, իւր ապրուսոը խնամատարելով իւր բոլոր անդամների միահամուռ կապով, միւս կողմից գաղրոցը երեխային առաջնորդումէ մասձողութեան ընդհանրական շրջանի մջ, որ ոչ թէ անձնական մարդկանց մի մասի բաժին է, այլ սեփհականութիւն ընդհանուր մարդկանութեան։ Այս դիմումը կողմից կեանքը երեխային ծանօթացնումէ մարդկային գործունեութեան այն աեսակ տեսակ ընթացքներին, որոնք երեւում են բա-

րեաց և չարեաց մէջ, զրաւեցուցիչ և զըզուեցուցիչ, աղնիւ և կոպիտ ձևերով։ Կա երեխային առաջնորդումէ մի անսահման պարտիզում, ուր անհամար և բազմաթիւ ծառափողոցներ կան, որոնց կողքերից օդատաւետ և վնասակար տունկեր են բննում, — պարտիզում առում ենք, որ տեղից նա կարող չէ էլ արտաքս ելանել, և ուր պէտք է կամոյ ակամայ ման զալու հմառութիւն ստանայ։ Չորրորդ կողմից եկեղեցին նորա հետ խօսումէ կրօնական, հանդերձեալ աշխարհի լիկուով, նորա գոյութիւնը և բազտաւորութիւնը կապակցումէ գերբնական դէպքերի հետ, և աշխատումէ անձահացնել նորան՝ նորա հողին արդէն այս կեանքում աներեցիթ աշխարհին նուիրեցնելով։ Եյս զօրութիւնների հետ յարակից եւ ուներսութ զօրութիւնը, որը առաւել քան միւս զօրութիւնները կեանքի հետ զաշնակցութիւն ունի վայելում, այնպէս ևո զանազանվում են տէրութեանց պահանջութիւնները այդ անդամների զաւակներից։ Բայց ոչ մի դէպքում տէրութիւնը բոլորովին անտարբեր չէ երախայոց վիճակի և ասպազայի մասին, նա էլ միշտ զիմում է իւր իշխանութիւնը նոցա վերայ բանեցնել։

Արկու աեսակ շարժառիթներ են առաջնորդում տէրութեան՝ երբ նա զիմում է երախայոց վերայ ներգործել, և երիտասարդներին իւր ազդեցութեան են-

թարկել . մի կողմից — իդէալական շարժառիթները , միւս կողմից — միմիայն գործնական շարժառիթներ :

Աա՛լաւ է պատահում , որ նորան իդէալական շարժառիթները առաջնորդեն , որոնք նաև միւս շարժառիթներից թոյլ են : Այդպիսի շարժառիթն է առաջնորդողը , երբ աշխատում էն առարձել այնպիսի իրունկեալ կը լուսական ուղղութեան որոշ չեալ ողունկեալ հարաբեկան առաջնորդութան առաջնորդեալ համարվութեան ընդունութիւնունի ընունեալ վասն զի մարդու ի բնէ զարդանալու ընդունակ է և բարձրագոյն հոգեկան կոչում ունի : «Քաղաքացիներու կրթութիւնը (այսինքն՝ գաղափարների և տեղեկութիւնների դումարը , իմացական ընդունակութիւնը , բարոյական , բանական և զիտակցական կամքը և սոցանից առաջացած արարմունքները , ճարտարութիւնները և դիտութիւնները , բարոյականութիւնը և ճշմարտասիրութիւնը) պէտք է զարդանան և կատարելագործութնն : Այդպիսի կրթութիւն ստանալու իրաւունքը ամենուն պէտք է տրուած լինի , որպէս զի հասարակաց կրթութեան աստիճանը բարձրանայ : Իռվանդակ ազգը՝ կրթուած լինելով՝ մի վերին գաղափար է դառնում և առաւել մօտիկ է մարդկութեան իդէալին , քան այն ահազին անկիրթ ամրութ՝ որ կառավարվում է բարձրագոյն կրթութիւն ստացած սակաւաթիւ անձինքներից : Ատոյդ է , որ տէրութիւնը իւր օրէ նոգրութեամբ , իւր կարդաղրութեանց և գործունեութեանց ժամանակ , համարեալ երբէ+ չ հետեւում այս բարձր իդէալական հիմքին : Իսոյց երբեմն ազգային կեանքի բարոյական և մաաւորական կողմը

այնպէս է ազգում արքունական ներգործող անդամի վերայ , որ նա սկսում է առանց շահասիրութեան յարգել քաղաքակրթութիւնը և ստիպուած է լինում այդ գործի վերաբերութեամբ , զոնեամասամբ ընդունել՝ իդէալական հայեացքը , կամ թէ երիտասարդներին այնպիսի կը թութիւն տալ՝ որ ժամանակի օգուտներին և պահանջողութիւններին յարմարացուցած լինի :

Տէրութիւնը ձեռնամուխ լինելով խնամատարել աճող սերնդի վիճակը՝ մի այլ շարժառիթ ևս ունի , որը առաւել զօրեղ է քան առաջին շարժառիթը , — այսինքն այն միաքը՝ թէ ազգի մտաւորական և բարոյական զօրութիւնները մի այնպիսի զանձ են կազմում , որով կարելի է առեատուր առնել , որը առատ տոկոսիք կրերէ : Կը թութիւն մասին այսպիսի հայեացքը այժմեան լուսաւորեալ տէրութիւնների համար քաղաքական հարկաւորութիւն է գարձել : Այժմեան տէրութիւններունիւթական վիճակը ակնյայտնի կախուած է ազգի բարոյական և մտաւորական զօրութիւնների զարգացման աստիճանից : Իազմաթիւ տեղեկութիւնները և զիտելիքները , ճարտարութիւնը և հմտութիւնը եղած հաստատութեանց աղբիւրներից օգուտ քաղելը և նոցա արժողութիւնքազմապատիեցուցանելը , մշակութեան նոր գործարաններ և եղանակներ կատարելագործելը և առեատուր կարդաղըելը քաղաքական անակեսութեան առողջ սկրզբունքներով և այն , — սոքա այնպիսի կարողութիւններ են , որ առանց սոցամի տէրութիւն հաստատ չէ : Ատաւոր զարգացման այսպիսի աստիճանը զառնում

է նորա զոյութեան ներքին և ամենակարեւոր պայման։ Այս կարեւորութիւնը առաւելանում է՝ մի կողմից մրցանակութեամբ մի և նոյն ասպարիզում, ուր սխորան են հանդիսանում այն տէրութիւնները, որոնք նոյն աստիճան զարգացման են հասել, միւս կողմից—նորանով, որ ընակիների բազմանալով բազմանում է ևս ասպրուսի պահանջմունքը, և ուրեմն առաւել շատ մշակութեան օրհնանջմունքը։ Աւստի ազդի մտաւորական դործուներութիւնը մեծ նշանակութիւն ունի տէրութեան համար, և նա անտարբեր կարող է լինել՝ թէ կայ արդեօք այդ գործուներութիւնը և զարդանում է, թէնուազում։ Իսկ մտաւոր գործուներութեան զարգացումը կամ անշարժութիւնը կախում ունի այն ուղղութիւնից, որ երիտասարդութիւնը բռնում է։

Ի հարկե աղջային մտաւորական և բարոյական զանձի մեծ մասը կարող է ստեղծուել արքունական իշխանութեան առանց ուղղակի խառնուելովը, բայց միմիայն մասնաւոր կամքի եռանգովը, ինչ լացիութեամբը և անձնական շահերով։ Յաջողակ և հարուստ անձնիքները, ծուխերը, արշեստաւորները և հասարակութիւնները կարող են առանց կառավարութեան մասնակցութեան մտաւորական զանձ վաստակել և արդիւնարեր գործքերին մասնակել, և ուրեմն առաջ նորա մասնակցութեան կարող են նոյն կերպով ներգործել աճող սերնդի վերայ։ Առքա կարող են այս վախճանին հասնելու համար զանազան ուսումնարաններ հիմնել, և այն տէղ հաստատել մտաւորական և բարոյական զարգացման այն ձգտումները, որոնց սերմերը իւրեանց սըր-

տէրումն են բարութուած։ Բայց մասնաւոր անձանց պայմանի ջանադրութիւնները մասսամբ անկարելի են առանց տէրութեան հովանաւորութեան, մասսամբ ևս ինքն ըստ ինքեան պակասաւոր են։ Աւստի տէրութիւնը հարկադրուած է միշտ հոգալ աճող սերնդի կրթութիւնը։

Տէրութիւնը պէտք է հոգայ այդ մասին գոնք այն պատճառով, որ լցուցանել իւր կարօտութիւնները։ Նա շատ մշակների կարօտութիւն ունի զօրքի համար, դժոմական վարչութեան համար, դատաստան գործելու համար, ոստիկանական օրաբարկանութիւններ կատարելու համար ևլն։ Այսպիսի տեսակ տեսակ գործքեր կատարելու բազմաթիւ պաշտօնեաններ հարկաւոր են տէրութեանը, որոնք վազօրօք պատրաստութիւն և զիտութիւնք պահանջում են։ Այդ զիտութիւնների գումարը պէտք է պահպանուի, նորոգուի և շատ անդամ սնողագար ընդլայնանայ։

Բայց տէրութիւնը ինչ շարժառիթներ որ ունենայ աճող սերնդի վերայ ներգործելու համար՝ նա միշտ իւր զիտութիւնները և ցանկութիւնները կատարելիս

Արկու ձանապարհ է ընարում երեխաններին իւր աղջեցութեան ենթարկելու . . արքունական պաշտօններ բաժանելու իրաւունքը . . դաշտացն, միւս կողմից նա բանեցնում է . . և զպրոցների մասին օրէնսդրութեան միջնորդութեամբ . . .

Արկու միջոցների յաջողակութիւնը ևս այնքան ակնյայանի է, որ մենք էլ չենք խօսի, թէ այդպիսի ներգործութիւնը առհասարակ ինչ մեծ զօրութիւն ունի։ Բայց դանալով այն խնդրին, թէ երի-

տասարգների կրթութեան վերայ այդ դրութիւնը զանազան կերպով է արտայայտում, այսքան կնկատենք, որ այն կրթութեան բնութիւնը և ուղղութիւնը, որ տէրութիւնը հարկաւոր է համարում տալերիտասարդներին, պայմանաւորվում է, ինչպէս և եկեղեցու ազգեցութեան ժամանակ, մասամբ նոյն այդ իշխանութեան տեսակ տեսակ բնութիւններից, մասամբ ևս այն անհամաձայնութեամբ, որ զիսաւոր տէրութիւնների մէջ թագաւորում է թէ արդեօք ազգային իրթութեան մէջ տէրութեան մասնակից լինելու չափը որքան պէտք է լինի: Երդէն հին ժամանակներում պարզ որոշուեցաւ այն ազգեցութիւններու զանազանութիւնը, որ կախուած է, աէրութիւններու քաղաքական կազմութեանց զանազանութիւններից: Բաւական է միտյն յիշել այն կրթութիւնը, որ Եթէնքում և Ապարդիայում երիտասարդները ստանում են, և առհասարակ բաղդատել Յունաց տէրութիւնները Երևելեան տէրութիւնների կամ Հռովմէական կայսրութեան հետ . . . :

Եյդ բոլոր ազգեցութիւնները՝ որոնց մասին մենք խօսեցինք՝ և որոնց ներգործութեամբ երեխանները զարգանում են՝ այն ընդհանուր յատկութիւն ունին, որ նախնի ժամանակներից սկսած դոցաներդորժութիւնը երեւում է արտաքին, շօշափելի ձևերում և յարաբերութիւններում: Դոքա անդադար ներգործում են սելնդների կազմուելու պատմութեան մէջ, հինց այն ժամանակից ինչպէս որ առաջին անգամ պատմութեան մէջ սելնդներ են երեւում: Գրծունելութեան այլ բնութիւն ունին երկու միւս զօրութիւնները,

որոնց մասին մենք լուսվութեամբ չպէտք է անց կենանք, վասն զի թէպէտ և նոցա տիրապետութիւնը ժամանակաւոր է, բայց զօրեղ ազգեցութիւն ստանում են և երբեմն խոր հետքեր թողնում են, երբ միաւորվում են արգէն մեզ յայտնի մի զօրութեան հետ, այն է դպրոցի հետ:

Եզրերի քաղաքակարթութեան պատմութեան մէջ երբեմն երբեմն այնպէս մեծ յափշտակութեանց բոպէններ են երեւում, որ ազգային քաղաքական կեանքից անկախ կամ թէ նորա հետ կապակից՝ թափանցում է այն ազգի հոգու մէջ: Եյդպիսի բոպէններում ազգի մեծագոյն զարդացած մասի համար կարծես մի նոր հոգեկան գոյութեան ասպարեզ է բացվում: Խորհող մարդիկ սկսում են տատ սնող տատանել, վերջին զաղափարներին զիմել, և այս պատճառաւ ներկայ կարգադրութիւններից շառերը նոցա թւում են վաս և հնացած, ևս և անհամաձայն ու անյարմար միշտ յառաջադիմ մարդկութեանը նոր և բարձր պահանջմունքներին: Եյսպիսի շարժողութիւնը շատ կամ քիչ զրոշմվում է և երեխանների վերայ զերդաստանի միջնորդութեամբ: Եմենայն ոք, որ ժամանակի նոր հոգուն տալիս է իւր լուման, ցանկանում է, որ իւր որդիքն ես նոյնպէս յափշտակուին, ցանկանում է, որ կրթութիւնը և զասատուութիւնը նոյն հոգւով նորոգուեն: Եյսպէս ուրեմն նոր ուղղութիւնից երբեմն ծնում է մի նոր զօրութիւն, որ այնպիսի մի պատմական գարաղլուխ է զասնում, երբ անող սերնդի կրթութիւնը երկար ժամանակ նորա միջն է խմբվում . . . :

*Եսինը կարելի է ասել և վերջին զօրու-

թեան մասին, որը մենք քննելու հնքը։ Աշ-
բեխան, այսինքն մարդկային բնութիւնը
իւր ֆիզիքական և հոգեկան կողմիրովը,
ինչպէս և ամենայն միւս երեսյթները,
բազմաթիւ խնդիրների նիւթ է գառնում,
որով մարդու խորհողական ընդունակու-
թիւնը միշտ պարապած է։

Որպէս բուսաբանութեան հիմք
եղաւ, ինդանին — կենդանաբանութեան,
իսկ երկուսը միասին — երկրագործութեան
դիտութեան և քաղաքական տնտեսու-
թեան, նոյնպէս ճարրը շատ զիտութեանց
ձիւղերի մշակութեան նիւթ եղաւ։ Կո-
ցա մէջ երեխոյի կը նունեածու ինդէւը նշա-
նաւոր տեղ ունի քաղաքակրթութիւնը
մեծ յառաջադիմութիւն է առնում, երբ
կանոնաւոր կրթութեան և դասատուու-
թեան միջնորդութեամբ իւր ողին աճող
սերնդին աւանդելով՝ աշխատում է հաս-
տատ ապահովուել առ յապայս։ Այդ
իրեւ կանոն լինելով, պէտք է մի և նոյն
ժամանակ ասել, որ աճող սերունդը կա-
րող է այդ աստիճանին հասնել առաջ,
քան կրթութիւնը և դասատուութիւնը
կը կանոնաւորուի, այսինքն առաջ՝ քան
կրթութիւնը և դասատուութիւրը վերո-
ցական խորհողութեան նիւթ կդառնան,
վասն զի ինչպէս ամենայն բանի մէջ, նոյն-
պէս և այս բանի մէջ՝ ուսումը գործնա-
կան կերպով երկար ժամանակ զնում է
իւր ծանապարհով, մինչեւ որ այդ գործ-
նականութիւնը վերջապէս պահանջողու-
թիւն զգայ ինչպէս որ դիտութիւնը պա-
հանջում է ծանր և խելացի խորհելու
կարօտութիւնը, և ըստ այնմ գործելու։

Խոկ երբ այդպիսի ձգտողութիւն է, ծը-
փում, այսինքն երբ երեխաների կրթելու

և դաս տալու խնդիրը ուսումնական կեր-
պարանք է ընդունում, մի հոգեկան զօ-
րութիւն է ծագում, որ ձայն է պահան-
ջում ամենայն գործնական խնդիրներում,
զերդատանի, գարոցի, ակրութեան և
միւս շրջանների կեանքում։ Յիշեալ բո-
լոր զօրութիւնները՝ ուսումնական հանչա-
լութունները ևս պահանջում է, որ երե-
խաները ենթարկուին այն կանոններին,
ուներին, վարմունքի եղանակին, հնարքնե-
րին, պատուելոներին և նպատակներին,
որոնց նա ծշմարիտ և բանաւոր է համա-
րում։ Ինչպէս Պղատոնը հին ժամանակ-
ներում ախոյեան դուրս եկաւ պահանջե-
լով, որ Եթենացի երիտասարդները ու-
սում առնեն և կրթուին նորա փիլիսո-
փայութեան սկզբունքների և տրամարա-
նութիւնների հիմամբ։

Եհա այն ընդհանուր զօրութիւնները,
որոնց ազգեցութեան տակ երեխայի ան-
հատականութիւնը իւր զարգացման ըն-
թացքը անցուցանում է։

Բնաբժ. * * *

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Վարդէ ւթեանը հասանող ամեն թշուա-
ռութիւններից ամենազարհուրելին պա-
տերազմն է։ Ասվա, ժանաամահը, ջրհեղե-
ղը, երկրաշարժութիւնը այդ պատուհա-
սից առաւել քիչ կործանող են, ոչ մե-
նակ նորա համար, որ դոքա աւելի սակաւ
են հանդիպում, քան թէ պատերազմնե-
րը, առանց որոց տօնս թէ մարդկային լի-
նելութիւնը չէր կ'ը բող ոտքի վերայ մնալ,
այլ և նորա համար, որ նիւթական բարիք-